



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Փետրվար 2018, թիվ 2(114)

Խմբագրական

ՄԻՋՅԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՈՒՄՆԵՐ. ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿՆԵՐԻՆԵՐ

Սույն թվականի փետրվարի 8-ին ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվեցին «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծերը:

Առաջին հայացքից սովորական այս օրենսդրական գործընթացի ամենահատկանշական մասը ԱԺ պատգամավորների՝ քվեարկությանը նախորդած ելույթներն էին, որոնք զարմանալիորեն աչքի ընկան իրենց ոչ կոմպետենտությամբ: Թվում էր՝ ելույթ ունեցող պատգամավորների մեծ մասը կամ ընդհանրապես չէր կարողացել նախագիծը, կամ կարողացել, բայց այդպես էլ չէր ընկալել «Միջհամայնքային միավորումների մասին» օրենքի նախագծի տրամաբանությունը: Սրա մասին են վկայում հնչեցված գնահատականները, որոնք այնքան քաղաքական եւ պոպուլիստական էին, որ մեծամասամբ առանց փոփոխության կարող էին տրվել ցանկացած այլ օրենսդրական ակտի նախագծի վերաբերյալ քննարկումներ անցկացնելիս:

ԱԺ պատգամավորների ելույթներում առանցքային անդրադարձ էր կատարվում ՀՀ կառավարության նախաձեռնությամբ օրենքով միջհամայնքային միավորումներ (ՄՀՄ-ներ) ստեղծելու հնարավորությանը, ինչը դիտարկվում էր որպես միավորումներ ստեղծելու ազատության իրավունքի սահմանափակում, ընդդիմության ձայնը լռեցնելու միտում եւ այլն: Ակնհայտ էր, որ միջհամայնքային միավորումների ստեղծման այդ տարբերակի գաղափարը դուր չէր եկել պատգամավորներից ոմանց, սակայն սա կարող է բացատրվել միայն մեկ հանգամանքով. վերջիններս պարզապես չեն ընկալել հարցի էությունը, եւ այն, թե որ դեպքերում միայն կարող է օրենքով ստեղծվել միջհամայնքային միավորում:

Որպես «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման եւ դրա հանրային քննարկումների իրականացման գործում որոշակի դերակատարում ունեցած կազմակերպություն՝ Համայնքների ֆինանսիստների միավորումը խորապես ափսոսում է, որ այդպես էլ չկարողացան հանրությանը լայն շրջանակներին հասցնել այս նախագծի կարեւորագույն դրույթներից մեկը. օրենքով ստեղծվող միջհամայնքային միավորումները կարող են զբաղվել միայն համայնքի ղեկավարի՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով: Այդպիսի պատվիրակված լիազորություններ կարող են լինել ներկայումս պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող հանրային բնույթի շատ ծառայությունների մատուցումը, օրինակ, հանրակրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության ոլորտներում, որոնց իրականացումը միջհամայնքային միավորման միջոցով շատ ավելի նպատակահարմար է եւ տնտեսապես արդարացված, քան առանձին վերցրած մեկ համայնքի ուժերով: Հակառակ դեպքում կարող ենք կրկնել քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունների (ԶԿԱԳ) կողմից մատուցվող ծառայությունների տիրահոջակ փորձը, երբ լիազորությունը պետության կողմից պատվիրակվել է միայն նախկին շրջկենտրոններ հանդիսացած համայնքներին, սակայն վերջիններս ծառայություն են մատուցում նաեւ հարակից մյուս համայնքներին: Ստացվում է, որ հարակից համայնքները ծառայություն են ստանում, սակայն որեւէ լծակ չունեն տվյալ ծառայության մատուցման որակի վրա ազդելու: Սա հանրային կառավարման համակարգում անընդունելի մոտեցում է, ավելին, համայնքներին լիազորությունների նման կերպով պատվիրակումը

ավելի աննպատակահարմար ու անարդյունավետ է, քան պետական կառավարման մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից ծառայություններ ստանալը: Վերջինիս դեպքում համայնքները հնարավորություն ունեն գոնե համապատասխան մարզպետի կամ ընտրատարածքի պատգամավորի միջոցով հարցեր բարձրացնել եւ որոշակի ազդեցություն ունենալ տվյալ ծառայության մատուցման վրա:

Խոսելով ՄՀՄ-ների մասին՝ պետք է հստակ գիտակցենք, որ առանց այս կառույցների ստեղծման հնարավոր չէ իրականացնել լիազորությունների նկատելի ապակենտրոնացում: Բնականաբար, կարող է հարց առաջանալ՝ եթե ՄՀՄ-ներն են լիազորությունների ապակենտրոնացման իրականացման հիմնական ուղին, ապա պետք է շեշտը դրվեր հենց այդ ինստիտուտի առաջնության եւ ոչ թե վարչատարածքային բարեփոխումների (համայնքների խոշորացման) վրա: Պատասխանը պարզ է. ՄՀՄ-ների համակարգը եւ համայնքների խոշորացումը իրար հակադրվող, իրար բացառող մոտեցումներ չեն, ընդհակառակը, շատ դեպքերում՝ միմյանց լրացնող եւ միմյանց կայացումը պայմանավորող համակարգեր են: Համայնքների խոշորացման փնջերը կազմվելիս, կարելի էր համայնքում տեղական ժողովրդավարության իրացումը, փորձ է արվել հնարավորինս խուսափել չափից ավելի խոշոր համայնքներ ստեղծելուց (ցավոք, միշտ չէ, որ դա հաջողվել է): Եվ ունենալով խոշորացված համայնքների ոչ մեծ խմբեր (բաղկացած 5-10 բնակավայրերից), չի լուծվում այնպիսի մեծամասշտաբ եւ իրենց բնույթով բարդ ծառայությունների մատուցման խնդիրը, ինչպիսիք են, օրինակ, հանրակրթությունը, սոցիալական, առողջապահական ծառայությունները: Այս իմաստով, ՄՀՄ-ները կոչված են համախմբելու նաեւ արդեն խոշորացված համայնքներին՝ համատեղ ուժերով իրականացնելու նման ծառայությունների մատուցումը:

Բացի այդ, համայնքների խոշորացումը ստորադասելով միջհամայնքային միավորումների ստեղծմանը՝ մենք կունենանք Վրաստանի տապալված փորձը, երբ ողջ երկրի վարչատարածքային բաժանումը եւ լիազորությունների ապակենտրոնացման համակարգը ուղղակիորեն խոչընդոտում են տարածքների համաչափ զարգացման սկզբունքին:

Օրենքի նախագծի համաձայն՝ ՄՀՄ-ների ստեղծման մյուս ճանապարհը համայնքների կամավոր միավորումն է, որը կարող է զբաղվել բացառապես համայնքների պարտադիր խնդիրների լուծման նպատակով սահմանված համայնքների ղեկավարների սեփական լիազորությունների, ինչպես նաեւ համայնքի ավագանու լիազորությունների իրականացմամբ: Սա միանգամայն տարածված ազատական մոտեցում է եւ հաջողությամբ կիրառվում է եվրոպական բազմաթիվ երկրներում: Վերջինիս նպատակահարմարության եւ տնտեսապես արդյունավետ լինելու հանգամանքը հանրաճանաչ է եւ դրա մասին ավելորդ ենք համարում մանրամասնել:

Հեռու մնալով քաղաքական որեւէ գնահատական հնչեցնելուց՝ հայտնում ենք մեր պատրաստակամությունը՝ կազմակերպելու եւ անցկացնելու աշխատանքային քննարկումներ ԱԺ պատգամավորների հետ՝ նպատակ հետապնդելով հնարավորինս օբյեկտիվ մեկնաբանություններ անելու օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՇԱՅԲԱՉՅԱՆ
Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Խմբագրական խորհրդի անդամներ

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՁԱՅՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱԿԱՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Մեկնարկեց ՀՀՄ նոր ծրագիրը

«Համայնք-ՀամաՏեղի» գրուցակիցն է Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՀՄ) նախագահի տեղակալ Աբրահամ Արտաշեսյանը:



Պարոն Արտաշեսյան, մարտի մեկից մեկնարկել է Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացվող նոր ծրագիրը: Ի՞նչ է այն իրենից ներկայացնում:

ԵՄ ֆինանսավորմամբ այս նոր՝ «Քաղաքացիների ձայնը եւ գործողությունները Հայաստանի բազմաբնակավայր համայնքներում» ծրագիրն իրականացվում է երեք գործընկեր կազմակերպությունների՝ Համայնքների ֆինանսիստների միավորման, Հայաստանի համայնքների միության եւ Տեղական ժողովրդավարության եվրոպական ասոցիացիայի (ALDA) կողմից: ՀՀՄ-ն հանդիսանում է ծրագրի իրականացման առաջնորդ կազմակերպությունը: Ծրագիրը միտված է տեղական մակարդակում կարողությունների հզորացմանը՝ համայնքներում մարդակենտրոն եւ կայուն տեղական զարգացման ծրագրեր նախագծելու եւ իրականացնելու համար: Ծրագրի թիրախն են հանդիսանալու թե՛ տեղական իշխանությունները, որոնք ձեռք կբերեն հմտություններ՝ բնակչությանն արդյունավետորեն ընդգրկելու ծրագրերի մշակմանը եւ իրականացմանը, թե՛ հենց բնակիչները, որոնք ակտիվորեն ներգրավված կլինեն տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացներում: Այս նպատակին հասնելու համար կիրառելու ենք մի շարք գործիքներ. կստեղծվեն աշխատանքային խմբեր, համայնքներում կկազմակերպվեն դասընթացներ: Ծեշտադրելու ենք համագործակցությունը համայնքային, միջհամայնքային եւ մարզային մակարդակներում, ստեղծվելու են կապեր եվրոպական գործընկեր համայնքների հետ: Նախատեսվում ենք նաեւ երիտասարդ մասնագետների ներգրավվածություն, որոնք հետագայում եւս իրենց գիտելիքներով եւ փորձով կօժանդակեն համայնքներին՝ ծրագրերի մշակման եւ իրականացման ժամանակ: էջ 3 →

← էջ 1

- Ինչպե՞ս են ձևավորվելու այդ աշխատանքային խմբերը, ի՞նչն է լինելու դրանց նպատակը:

- Աշխատանքային խմբերը ստեղծվելու են երեք մակարդակների համար՝ համայնքային, միջհամայնքային եւ մարզային:

Համայնքային մակարդակում խմբերի ստեղծման համար հիմք կընդունվի «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման եւ գործունեության» կարգը, որը մշակվել է ներդրվել է համայնքներում ՀՀ կողմից ՀամաՏեղ ծրագրի շրջանակում: Բնականաբար, աշխատանքային խումբն այլ կարգավիճակ կունենա, սակայն կպահպանվեն այն հիմնական սկզբունքները, որոնք կապահովեն աշխատանքային խմբում բնակչության ակտիվ ընդգրկվածությունը եւ տեղական իշխանությունների հետ համագործակցության բարձր մակարդակը: Կարելի է, որ աշխատանքային խմբերի ձևավորման նախաձեռնողը լինեն տեղական իշխանությունները: Նրանք պետք է այդ խմբերը դիտեն որպես համայնքներում առկա խնդիրների վերահաման եւ դրանց լուծմանն ուղղված գաղափարների գեներացման լրացուցիչ ռեսուրս: Այս իմաստով, համայնքային մակարդակում աշխատանքային խմբերի հիմնական գործառույթը լինելու է մասնակցային եղանակներով համայնքի զարգացման գաղափարներ ասպարեզ բերելը եւ քննարկելը: Համայնքում աշխատանքային խմբերի արդյունավետությունն ապահովելու համար կկազմակերպվեն դասախոսություններ եւ քննարկումներ, որոնք կներառեն ՏԻ, սոցիալական ոլորտին, տուրիզմին, երիտասարդությանը եւ այլ բնագավառների առնչվող թեմաներ: Ըստ անհրաժեշտության, աշխատանքային խմբերին կաջակցեն նաեւ երիտասարդ մասնագետները՝ ոլորտային եւ մասնագիտական հարցերի շուրջ:

Միջհամայնքային մակարդակում աշխատանքային խմբերը հնարավորություն կտան ամրացնել համայնքների միջեւ համագործակցությունը եւ հանդես գալ համատեղ ծրագրերով: Ուստի, այս մակարդակում խմբի աշխատանքը լինելու է՝ առանձին համայնքներում ձևավորված գաղափարներին ծրագրային տեսք տալ եւ համապատասխան ծրագրեր մշակել: Հետեւաբար, այս խմբերում ընդգրկվելու են ծրագրերի մշակման փորձ ունեցող մասնագետներ, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք այդ տարածաշրջանում ծրագրերի իրականացման փորձ ունեն: Այս փուլում նախատեսվում են նաեւ ներգրավվել ավտոմատական տարբեր համայնքներ ներկայացնող մեր գործընկերներին. նախ՝

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՁԱՅՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱԿԱՎՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Մեկնարկեց ՀՀՄ կոր ծրագիրը

«Համայնք-ՀամաՏեղի» գրուցակիցն է Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՀՄ) նախագահի տեղակալ Աբրահամ Արտաշեսյանը:



որպես օրինակ վերցնել, նաեւ՝ օգտագործել նրանց փորձառությունը եւ երկրորդը՝ հիմք կդնեն այդ համայնքների հետ հետագա համագործակցության համար:

Մարզային մակարդակի աշխատանքային խմբի նպատակն է լինելու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի եւ վերը նշված ծրագրերի համապատասխանեցումը: Նախատեսվում է, որ ծրագրերից որոշները տեղ կգտնեն մարզերի զարգացման ծրագրում եւ համապատասխան պետական աջակցություն կունենան:

- **Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով համայնքներում բազմաթիվ ծրագրեր չեն իրականացվում, ինչպե՞ս է ծրագիրը նպաստելու կամ անդրադառնալու այս խնդրին:**

- Ծրագրով նախատեսվում են 3 տեսակի ենթադրամաշնորհներ, ինչը որոշ առումով կմեղվի ֆինանսների սակա-

վության խնդիրը: Հայաստանում առաջին անգամ կիրառելու ենք «Զաղաքացիների բյուջե» հասկացությունը: Սա ենթադրում է, որ համայնքի բյուջեից որոշակի գումար կհատկացվի այն ծրագրերին, որոնք կներկայացվեն բնակիչների կողմից: Ծրագրով կաջակցենք եւ ներդրում կունենանք այդ բյուջեների ձևավորմանը բոլոր 52 թիրախ համայնքներում:

Կիրականացնենք նաեւ միջհամայնքային 7 ծրագիր, որոնք կընտրվեն այս մակարդակում մշակված ծրագրերից՝ մրցութային եղանակով: Առաջնահերթություն կտրվի զբոսաշրջության, սպորտի եւ ընտանեկան ժամանցի ակտիվացմանն ուղղված ծրագրերին:

Դրամաշնորհների երրորդ տեսակը ուղղված կլինի «ցուցադրական» 3 ծրագրերին: Այս ծրագրերն իրենց բնույթով ավելի մեծ կլինեն եւ նպատակ կունենան տեսանելի փոփոխություն ապա-

հովել հանրապետության հեռավոր համայնքներում եւ դրանք գրավիչ դարձնել զբոսաշրջության համար:

- **Որքա՞ն է ծրագրի տեղողությունը, եւ ո՞ր համայնքներից եք սկսելու աշխատանքները:**

- Ծրագրի տեղողությունը 2,5 տարի է: Ծրագիրը մեկնարկեց մարտի 1-ին, սակայն բացման միջոցառումը մի փոքր ուշ ենք նախատեսել՝ նախապատրաստական աշխատանքները պատշաճ իրականացնելու համար: Այն տեղի կունենա մայիս-հունիս ամիսներին, Գյումրի քաղաքում, ուստի կարելի է ասել, որ սկսում ենք Շիրակի մարզից: Նշեմ, որ թիրախում են Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի եւ Գեղարքունիքի մարզերի բազմաբնակավայր համայնքները: Հետագա գործողությունները համայնքների հետ զուգահեռաբար են իրականացվելու, այսինքն՝ ծրագրային բոլոր համայնքներում նույն գործողությունները գրեթե միաժամանակյա են իրականացվելու: Ծիշտ է, համայնքների թիվը բավական մեծ է, ինչը դժվարություններ է առաջացնում, սակայն, հաշվի առնելով նաեւ ծրագրի տեղողությունը, պետք է լուծումներ գտնենք աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար: Օրինակ՝ վերապատրաստման դասընթացների համար կձեւավորենք 2-3 համայնքների փնջեր, որոնց համար մեկ դասընթաց կկազմակերպենք: Հնարավորինս կհամագործակցենք նաեւ տեղական իշխանությունների եւ փորձագետների հետ՝ խմբերի ձևավորման եւ դրանց աշխատանքների կազմակերպման գործընթացներում: Կկիրառենք նաեւ էլեկտրոնային կապի միջոցներ, որոնք կօգտագործվեն նաեւ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու համար: Ավելացնեմ, որ կատարված աշխատանքների մասին էլ պարբերաբար կտեղեկանան նաեւ «Համայնք-ՀամաՏեղի» ընթերցողները:

ՀԱՍՄԻԿ ԲԵՐՈՒՅԱԼ



Հետազոտական ռեսուրսների կոլկասայան կենտրոն-Հայաստան հիմնադրամը (ՀՌԿԿ-Հայաստան) «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակում հայտարարել է հետազոտական դրամաշնորհների մրցույթ: Այն նպատակ ունի

զարգացնել դրամաշնորհառուների հետազոտական կարողությունները եւ օգտագործել նրանց հետազոտության արդյունքները ՏԻՄ-երում ՀՀ քաղաքացիների ակտիվ եւ իրազեկ մասնակցությունը խրախուսելու համար: Փետրվարի 22-ին ՀՌԿԿ-Հայաստանի գրասենյակում տեղի

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

ունեցավ տեղեկատվական հետազոտողներին ավելի մանրամասն ներկայացնելու ծրագրի պահանջները: Հանդիպմանը

մասնակցեցին տարբեր ՀԿ-ներ ներկայացնող չորս հետազոտողներ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին մասնակցների կողմից առաջարկված հետազոտական թեմաները՝ մեծապես ուշադրություն դարձնելով հետազոտական մեթոդների ընտրության խնդրին:



Դրամաշնորհային ծրագիրը բաց է հանրային կառավարման, քաղաքագիտության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի եւ հարակից այլ մասնագիտությունների երիտասարդ հետազոտողների, այդ թվում՝ մագիստրատուրայի ուսանողների եւ ասպիրանտների համար: Դիմումներն ընդունվում են մինչեւ մարտի 11-ը:

«ՄԻՋՐԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ընդհանուր առմամբ, ևորից համաձայնելով վերջին երկու կարծիքների հետ, այնուամենայնիվ, մնում ենք այն կարծիքին, որ օրենքի նախագիծը գերծ չէ թեթյուններից եւ չի կարգավորում մի շարք առանցքային հարցեր, որոնցից հատկանշական են, մասնավորապես, հետեւյալները՝

• Որոշ հարցերի կարգավորումներ օրենքի նախագծից համապատասխան հղումով տեղափոխվում են միջհամայնքային միավորման կանոնադրության մեջ, որը հանգեցնում է նրան, որ օրենքի ընդունումից հետո մի բարդ աշխատանք էլ սպասվում է կանոնադրության օրինակելի ձևով մշակելու ժամանակ:

• Միջհամայնքային միավորման խորհրդի նիստերի գումարումը նախատեսվում է ըստ անհրաժեշտության կամ օրենքի նախագծով դրանց ժամկետը չի սահմանվել, ինչը հղի է բացասական հետեւանքներով՝ պատճառ հանդիսանալով նիստերը գումարելու ավելի ուշ-ուշ, քան իրականում դրանց կարիքը լինելու է:

• Խնդրահարույց է մնում խորհրդի նախագահի ընտրության կատարումը խորհրդի անդամ համարվող համայնքների



րի ղեկավարների կազմից: Բնական հարց է ծագում, թե ինչպե՞ս է համայնքի ղեկավարը համատեղելու իր պաշտոնը միջհամայնքային միավորման խորհրդի նախագահի պաշտոնի հետ, որին օրենքի նախագծով վերապահված են ինչպես ներկայացուցչական, այնպես էլ գործադիր մարմինների լիազորություններ: Չէ՞ որ երկուսն էլ անչափ պատասխանատու պաշտոններ են, եւ դրանք զբաղեցնող

մեկ պաշտոնյայի աշխատանքային ծանրաբեռնվածությունը, պարտականությունները եւ աշխատաժամանակը պարզապես կրկնապատկվում են: Արդյո՞ք դա թույլատրելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Եվ ընդհանրապես, անհասկանալի է մնում, թե օրենքի նախագծի հեղինակներն այս առնչությամբ ինչո՞ւ են խուսափել միջհամայնքային միավորման կառավարչի ինստիտուտի ներդրումից՝ գործադիր մարմնի լիազորությունները եւս վերապահելով խորհրդի նախագահին: Համաձայն միջազգային լավագույն փորձի՝ կառավարիչը համարվում է միջհամայնքային միավորման հիմնական գործադիր մարմինը՝ հստակ լիազորություններով ու գործառնություններով:

• Օրենքի նախագծում հպանցիկ պետք է համարել միջհամայնքային միավորման աշխատակազմին, սեփականությանը, ֆինանսավորմանը, վերահսկողությանը, հաշվետվողականությանը վերաբերող հոդվածներով սահմանված դրույթները, որոնք կարիք են զգում ավելի հստակեցման, որոշ դեպքերում՝ նաեւ մանրամասնման:

ՀՅՄ փորձագիտական թիւ

2017թ. ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում իրականացվեց Երիտասարդական Բանկի համայնքային ծրագրերի 2-րդ փուլը: Հայաստանի 10 համայնքներում գործող Երիտասարդական բանկի անդամները նախեսառաջ առանձնացրեցին իրենց համայնքներում առկա հիմնական եւ առաջնային այն խնդիրները, որոնք կարող էին լուծում ստանալ Երիտասարդների անմիջական ներգրավվածությամբ: Անցկացված հարցումների եւ ուսումնասիրությունների արդյունքում ԵԲ կոմիտեների կողմից այս խնդիրներն առանձնացվելուց հետո հայտարարվեց համայնքային խնդիրների լուծմանն ուղղված փոքրածավալ ծրագրերի ընդունման մասին:

Հայտարարությունը լայն արձագանք գտավ Երիտասարդների շրջանում, եւ ԵԲ տասը կոմիտեներն ընտրեցին լավագույն ծրագրերը, որոնք իրականացվելու են Երիտասարդների կողմից եւ միտված են նպաստելու նրանց մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը, համագործակցությանը տեղական ինքնակառավարման մարմինների հետ, մասնակցության գործիքների կիրառմանը, հմտությունների եւ գիտելիքների ձեռքբերմանը:

Արդյունքում Հայաստանի տարբեր համայնքներում իրականացվում են 29 ծրագրեր՝ Արարատի, Արմավիրի, Աշտարակի, Գյումրիի, Գորիսի, Դիլիջանի, Իջեւանի, Մարտունու, Վայքի եւ Վանաձորի Երիտասարդական բանկերի ֆինանսավորմամբ: Ընտրված ծրագրերից շատերը ներառում են ՏԻՄ-երի հետ անմիջական համագործակցություն եւ ֆինանսական ներդրումներ: Օրինակ՝ Արարատի ԵԲ-ն հաջողությամբ բանակցեց Նոր Կյանք համայնքի ՏԻՄ ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում իրականացվող ծրագրերից մեկը, որի նպատակն էր աջակցել Նոր Կյանք համայնքի նկարչական խմբակին, իրագործվելու է ՏԻՄ-ի կողմից համաֆինանսավորմամբ: Այս համայնքի նախաձեռնող խումբը ՏԻՄ-ի հետ միասին ձեռք բերեց նկարչական պարագաներ եւ տրամադրեց համայնքում գործող խմբակին: Արարատի ԵԲ կողմից ընտրված եւս երկու ծրագրեր, որոնք իրականացվելու են Ուրցածոր համայնքում, ներառում են ՏԻՄ ֆինանսական ներդրում եւ անմիջական աջակցություն: Այս համայնքում երկու ծրագրերը նպաստելու են Երիտասարդական, մշակութային ու սպորտային կյանքի զարգացմանը եւ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ

ակտիվացմանը: Երիտասարդները նախաձեռնեցին սպորտային գույքի ձեռքբերում Ուրցածոր համայնքի Շաղափու բնակավայրի դպրոցի համար, ինչպես նաեւ նախաձեռնեցին բեմական հագուստի ձեռքբերում Ուրցածոր համայնքում գործող երգի խմբակի սաների համար: Գորիսի ԵԲ-ն եւս ներկայացրեց ծրագրերը ՏԻՄ-երին եւ վերջիններին կողմից հավելյալ աջակցության եւ ֆինանսական ներդրման պայմանավորվածություններ ձեռք բերեց: Գորիսի ԵԲ-ի կողմից ընտրված ծրագրերից մեկի նպատակն է զարգացնել բուսաբուծությունը իրենց համայնքում, որը որպես մշակույթի տարր մոռացության է մատնվում, իսկ մեկ այլ ընտրված ծրագիր նպաստելու է Գորիսի Գիտակների ակումբի կայացմանը, որի հերթական հան-



դիպումներից մեկի թեման նվիրված է լինելու տեղական ինքնակառավարմանը: Մարտունու ԵԲ-ն ծրագրերի շնորհանդեսը իրականացրեց համայնքապետարանում՝ Մարտունի համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների մասնակցությամբ: Միջոցառման ընթացքում կարելի էր երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, ինչպես նաեւ քննարկվեց ՏԻՄ աջակցությունը այս ծրագրերի իրականացմանը: ՏԻՄ անմիջական աջակցությամբ Մարտունի քաղաքում կկատարվեն 20 ցուցանակներ տվյալ փողոցի անվամբ եւ համառոտ հետաքրքիր տեղեկատվությամբ, իսկ մեկ այլ ծրագրով կտեղադրվեն տեղեկատվական վահանակներ՝ համայնքային անցուղարձի մասին բնակիչներին իրազեկելու համար:

Երիտասարդական բանկի բազմամյա փորձը վկայում է, այն մասին որ Երիտասարդների ներգրավման այս մեթոդաբանությունը նպաստում է համայնքային կյանքին վերջիններին մասնակցության բարձրացմանը, համայնքների նկատմամբ սեփականության զգացման ամրապնդմանը: Ավելին, Երիտասարդները ստանում են պրակտիկ գիտելիքներ առաջնորդության, կամավորության, մասնակցայնության եւ տեղական ինքնակառավարման մասին: Այդպիսով նրանք իրականացնում են տարբեր նախաձեռնություններ եւ դառնում Երիտասարդ առաջնորդներ իրենց համայնքներում:

Երիտասարդական Բանկ ծրագիրը, որը 2007-ից ի վեր իրականացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից, հատուկ մշակված մեթոդաբանությամբ նպաստում է Երիտասարդների՝ համայնքների զարգացման գործընթացում ակտիվ ներգրավմանը:

Սեփ.լր.



ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Փետրվարի 21-ին Եվրասիա համագործակցությունը հիմնադրամի (ԵՀՀ) գրասենյակում «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր «Համայնքներում կիրառվող մասնակցության էլեկտրոնային գործիքները եւ իրականացված առցանց քննարկումների փորձը» թեմայով քննարկում, որին մասնակցում էին համայնքապետարանների, ԻնֆոՏեղի ներկայացուցիչներ:



Ողջունելով ներկաներին՝ ՀամաՏեղ ծրագրի ղեկավար, Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) նախագահ Վահան Մովսիսյանը եւ ԵՀՀ ծրագրերի ղեկավար, ՀամաՏեղ ծրագրի համակարգող Միքայել Հովհաննիսյանը կարեւորեցին համայնքներում մասնակցության էլեկտրոնային գործիքների կիրառումը, որոնք կնպաստեն տեղական ինքնակառավարման մակարդակում հանրային մասնակցության դերի բարձրացմանը: Այս համատեքստում առանձնացվեց առաջին անգամ Աշտարակ համայնքում անցկացված առցանց հանրային քննարկման նախադեպը:

պես նաեւ մասնակցել համայնքային նշանակության այս կամ այն հարցի շուրջ կազմակերպվող ֆորումներին, իրավական ակտերի կամ դրանց նախագծերի քննարկմանը: Ավելին, ցանկացած ոք կարող է նաեւ պաշտոնապես, նույնականացման քարտով, դիմում, հարցում կամ բողոք ներկայացնել եւ ստանալ պատասխան:

ավագանու եւ համայնքի ղեկավարի որոշումների, ինչպես նաեւ այլ փաստաթղթերի վերաբերյալ անցկացված հանրային լուսմների եւ քննարկումների արդյունքները, համայնքում տեղական ինքնակառավարման

ՀՖՄ ղեկավարը շեշտադրեց այն փաստը, որ եթե դահլիճային քննարկումներին մարդիկ խուսափում են ֆիզիկապես ներկա գտնվել ու մասնակցում են միայն համայնքապետական կառույցների ներկայացուցիչներ, ապա առցանց քննարկմանը մասնակցում է ցանկացած շահագրգիռ կողմ կամ անձ: Նա կոչ արեց հաշվի առնել բոլոր թերությունները եւ այս լավ նախադեպը կիրառել նաեւ մյուս համայնքներում, ինչը միանշանակորեն կնպաստի բնակչության մասնակցության բարձրացմանը:

Բանախոսը հորդորեց համայնքային կայքերում տեղադրված տեղեկատվական նյութերը հնարավորինս շատ տարածել սոցիալական ցանցերում, որովհետեւ դրանց այցելումներն ավելի շատ են:



Ի թիվս մի շարք գործիքների՝ խոսվեց նաեւ ցանցային մասնակցության մասին, որի գաղափարն առաջացել է իրականություն է դարձել ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում եւ արդյունքում ՏԻՄ աշխատակիցները ստեղծել են մասնագիտական թիմեր, եւ կապը համայնքապետարանների միջեւ դարձել է հեշտ ու արդյունավետ:

վարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձեւավորման եւ գործունեության, համայնքում հանրային բաց լուսմների եւ քննարկումների կազմակերպման եւ անցկացման կարգեր եւ այլ պահանջվող տեղեկություններ:

Իսկ թե էլեկտրոնային մասնակցության ինչպիսի գործիքներ են կիրառվում համայնքներում, ներկայացրեց «Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն» ՀՀ նախագահ Գրիշա Կապուսյանը: Վերջինս նախ անդրադարձավ վերջերս ՄԱԿ-ի կողմից իրապարակված էլեկտրոնային մասնակցության ցուցիչներին, որոնք 2016թ. արդյունքներն են, եւ այդ ցանկում ընդգրկված 193 պետությունների շարքում Հայաստանը զբաղեցնում է 86-րդ հորիզոնականը: Բանախոսը նշեց, որ այդ ցուցիչը որքան արժանահավատ է, նույնքան էլ՝ ոչ արժանահավատ, որովհետեւ ձեւավորվում է անորոշ տեղեկատվության հավաքագրման արդյունքների հիման վրա:

Հանդիպման առանցքային թեմաներից մեկը վերաբերում էր հանրային քննարկումների անցկացման իրավական հիմքերին: Այս առնչությամբ ՀՖՄ փորձագետ Դավիթ Մարգարյանը մանրամասնեց, որ հանրային քննարկումներն անցկացվում են համաձայն ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Իրավական ակտերի մասին» օրենքների, ինչպես նաեւ ՀՀ կառավարության «Հանրային քննարկումների կազմակերպման եւ իրականացման կարգը հաստատելու մասին» որոշման: Այսինքն, դրանց կազմակերպումն ու իրականացումը որեւէ պաշտոնային բարի կամքի դրսեւորում չէ, այլ օրենսդրության պահանջ:

Համաձայն «ՏԻ մասին» ՀՀ օրենքի, համայնքի ղեկավարը կազմակերպում է համայնքի զարգացման ծրագրերի եւ տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու եւ ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լուսմներ կամ քննարկումներ, որոնց ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը:

Գ. Կապուսյանը տեղեկացրեց, որ այժմ գործում է 240 համայնքային կայք, որոնցից 231-ը հիմնված է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի վրա: Որպես էլեկտրոնային մասնակցության գործիք առաջնահերթությունը տրվեց համայնքային կայքերում տեղադրվող հարցումների իրականացմանը, որոնց կարող են մասնակցել բնակիչները: Ներկայացվեց նաեւ, թե ով կարող է անանուն կամ գրանցված տարբերակով հարց հղել համայնքապետարանի որեւէ պաշտոնային, ինչպես

Հոլում կատարելով ՀՀ «ՏԻ մասին» օրենքի համապատասխան դրույթին՝ Դ. Մարգարյանը տեղեկացրեց, որ ըստ օրենքի, 3000 եւ ավելի բնակիչ ունեցող համայնքը պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որտեղ ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինեն համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լուսմների եւ քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը եւ ժամը, համայնքի

կայացում համայնքի ղեկավարին:

Բանախոսը հավելեց նաեւ, որ հանրային քննարկումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է. կազմակերպման եւ իրականացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, իսկ համայնքներում՝ համայնքի ավագանին:

Հանրային լուսմները եւ քննարկումներն, ըստ էության, անցկացվում են դահլիճային տարբերակով, սակայն վերջերս Աշտարակ համայնքում առաջին անգամ կազմակերպվել է իրականացվել է առցանց հանրային քննարկում, որի նախապատմությունը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալ Գեորգ Եղիազարյանը: «Նախորդ տարիների քննարկումների փորձը ցույց տվեց, որ այդ կարճ ժամանակահատվածում ոչ մի

պես մեկնարկեց առցանց քննարկումը», - պատմեց համայնքապետարանի ներկայացուցիչը: Վերջինս հավելեց, որ գործընթացն իրականացվել է օրենքին համապատասխան, եւ սահմանված ժամկետում ցուցաբերվել է անսխառեպ ակտիվություն, եղել են բազմաթիվ կարծիքներ, առաջարկներ, որոնց մի մասն արդեն իսկ ներառվել է համայնքի 2018թ. ֆինանսական փաստաթղթում՝ համայնքի տարեկան բյուջեում:

Բանախոսը ներկայացրեց նաեւ առցանց քննարկման առավելությունները, նշելով, որ այս տարբերակը առավել մասնակցային է, եւ կարծիքներն ավելի շատ են ու անաչառ, չկա մասնակցության շերտավորում եւ ժամանակի սահմանափակում, քննարկմանը կարողացել են մասնակցել նաեւ սահմանափակ կարողությունների տեր մարդիկ, որոնք խուսափում են մասնակցել դահլիճային քննարկումների:



Գործընթացն իրականացնելիս եղել են նաեւ թերություններ, որոնք հաշվի կառնվեն հաջորդ քննարկումները կազմակերպելիս:

Աշտարակ համայնքում անցկացված առցանց քննարկումը բարձր գնահատեց նաեւ ԱՄՆ ՄՀԶ ծրագրերի համակարգող Արթուր Դրամփյանը:

կրեատիվ առաջարկություն, դիտողություն չէին ստանում, եւ դա ընդամենը լինում էր գեկուցողի կողմից ներկայացում, մի քանի հարց, պատասխաններ...

«Մենք ուզում էինք, որ սա լինի այն հարթակը, որտեղ մարդիկ կարողանան կարծիքներ փոխանակել իրենց համայնքի մասին, ու սա հաջողվել է, - նշեց պարոն Դրամփյանը: Բնակիչները ոչ միայն կարողացել են, այլ նաեւ հարցեր են բարձրացրել, որոնք նաեւ պատասխաններ են ստացել: Սա համարում են բեկումնային, ու պետք է քննարկել, թե ինչպես



յին լուսմների մասին կարգերում կա մի մաս, համաձայն որի՝ հանրային քննարկումներ կարելի է անցկացնել նաեւ առցանց, որոշեցինք դա զարգացնել: «Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոնի» կողմից մեր կայքում տեղադրվեց համապատասխան պատուհան, որտեղ տեղակայվեց հրավերը եւ համայնքի բյուջեի նախագծի հակիրճ տարբերակը, որը տարածվել է նաեւ սոցիալական ցանցերում: Եվ այդ-

անել, որ հանրային քննարկման անցկացման այս փորձը մյուս համայնքներում էլ դառնա ավանդույթ, որպեսզի մարդիկ հավատան, որ կա հնարավորություն ազդելու հանրային որոշումների վրա, որ ամեն ինչ չէ, որ պետք է վերելից պարտադրվի, որ մարդկանց կարծիքը կարելու է»:

Քննարկման ընթացքում հնչեցին մի շարք հարցեր ու առաջարկներ:

«ՀԱՄԱՅՆՔՆԵՆ ԻՄ ՏՈՒՆՆ Է, ԵՍ ՄԱՍՆԱԿԿՑՈՒՄ ԵՍ ՀԱՄԱՅՆՔԻՍ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹ ՓԱՐԱՔԱՐՈՒՄ



«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում «ԿԱՍԶ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքիս կառավարմանը» ծրագրի շրջանակներում Փարաքար համայնքում անցկացվել է համանուն խորագրով շարադրությունների և նկարների մրցույթ: Մասնակցել են Փարաքարի դպրոցների ավագ դասարանների աշակերտներ, արվեստի դպրոցի սաներ, ինչպես նաև մրցույթով հետաքրքրված փարաքարի այլ պատանիներ, ընդհանուր առմամբ ավելի քան 40 մասնակից: Շարադրությունների և նկարների միջոցով մրցույթի մասնակիցներն իրենց աշխատանքներում փորձել էին գեղարվեստորեն արտացոլել համայնքը, ներկայացնել նրա խնդիրները և համայնքի կառավարումն իրենց պատկերացմամբ: Մրցույթային բոլոր նկարները տեղ են գտել Փարաքարի մշակույթի տանը կազմակերպված «Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքիս կառավարմանը» նկարների ցուցահանդեսում: Յուրաքանչյուր անվանակարգում երեք լավագույն աշխատանքների հեղինակները պարգևատրվել են տարբեր ծրագրի շրջանակներում կայացած «Փարաքարն իմ տունն է» հանրային-մշակութային մրցույթի ժամանակ՝ արժանանալով մրցանակների և հավաստագրերի: Մրցույթի մյուս մասնակիցները ես արժանացել են մասնակցության հավաստագրերի և փոքրիկ հուշանվերների: Հատկանշական է, որ թե՛ նկարների, թե՛ շարադրությունների մրցույթների առաջին և երրորդ տեղերն զբաղեցրած պատանիները մասնակցել են նույն ծրագրի շրջանակներում իրականացված ՏԻՄ և մեդիա դասընթացներին: Ներկայացնում ենք շարադրությունների մրցույթում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Աննա Բեչանյանի աշխատանքը:

Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքիս կառավարմանը

(շարադրություն)

«Մեր արածը պարզապես մի կաթիլ ջուր է օվկիանոսում, բայց եթե այդ կաթիլը չլիներ, կարծում եմ, օվկիանոսը կզգար դրա պակասը»:

Սայր Թեղեզա

Այս հանճարեղ խոսքերը պետք է ցանկացած մարդու գործունեության նշանաբանը լինեն: Այո՛, ամեն ինչ մեզ համար է սկսվում մեր տունը, գյուղը կամ քաղաքը, համայնքը, պետությունը, ողջ երկրագունդն ու տիեզերքը: Պետք է հասկանալ, որ մեր կատարած ցանկացած քայլ կարող է լինել սկիզբ՝ համատեղ ուժերով մեծ հաջողությունների հասնելու համար:

Ես ապրում եմ Փարաքար համայնքում, որն ունի շուրջ երկու հազար երկու հարյուր վեց տարվա պատմություն: Համայնք, որ մինչ այսօր շարունակում է ծաղկել ու շենանալ: Ամեն անգամ, երբ քայլում եմ նրա փողոցներով, լսում ծանոթ ու անծանոթ մարդկանց զրույցները, նայում ինձ շրջապատող բարի դեմքերին, հարազատ մարդկանց, հասկանում եմ, որ տանն եմ. համայնքն իմ տունն է: Եվ ինչպես էլ կառուցում ենք տունը՝ քարը քարին դնելով, այդպես էլ պետք է կառուցենք համայնքը՝ դարձնելով այն էլ ավելի ծաղկուն: Հասկանում եմ, որ այդպիսի համայնք կարելի է ստեղծել միմիայն համախմբված և կազմակերպված գործելու դեպքում: Այս առումով շատ կարևորում եմ համայնքիս յուրա-

քանչյուր անդամի դերը և կարծիքը՝ խնդիրները վեր հանելու և քայլ առ քայլ լուծելու համար: Գիտակցելով այս գործի կարևորությունն ու պատասխանատվությունը՝ ես նույնպես ցանկանում եմ իմ փոքր, բայց արժեքավոր ներդրումն ունենալ համայնքիս կառավարման գործում:

«Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքիս կառավարմանը» խորագրով դասընթացին մասնակցելուց հետո հասկացա, որ շատ բան կարող եմ փոխել և սկսեցի համայնքիս բարելավմանն ուղղված ծրագրեր մշակել, որոնք կիրականացնեի, եթե ես կառավարեի այն:

Ես գիտեմ, որ բազում դրական կողմերի հետ մեկտեղ մեր համայնքում կան նաև չլուծված խնդիրներ: Իմ կարծիքով, անհրաժեշտ է ստեղծել հասարակական կազմակերպություններ և համայնքապետարանին կից երիտասարդական խորհրդակցական մարմին, որը օղակ կհանդիսանա բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կապի հաստատման համար: Անկախորձ խնդիրների վերացման համար կարող ենք նախաձեռնություններ կազմակերպել, ստորագրահավաքներ անցկացնել և ներկայացնել համայնքի ղեկավարին՝ փորձելով դրանց լուծում տալ: Համայնքի չլուծված խնդիրների համար համայնքապետին անհրաժեշտ է աջակցություն, դրամական միջոցներ, որի համար առաջարկում եմ ստեղծել հիմնադրամ՝ ողջ բնակչության օժանդակությամբ, ինչի շնորհիվ կլուծվեն աղբահանության, ասֆալտապատման և այլ խնդիրներ:

Փարաքարի զարգացումը հանրապետական նշանակություն ունի,

որովհետև Հայաստան այցելողն առաջինը մեր համայնքով է անցնում, իսկ առաջին տպավորությունը շատ կարևոր է: Կարծում եմ՝ օղանավակայանին մոտ լինելու շնորհիվ Փարաքարը կարող է դառնալ Հայաստանի զբոսաշրջության և մշակութային կենտրոններից մեկը: Օղանավակայանի ճանապարհին կարող ենք ստեղծել մի վայր, որտեղ կցուցադրվեն հայկական գորգեր, հայկական նախշերով զարդարված սպասք, իրեր: Վայր, որտեղ կսովորեցնեն հայկական ուտեստներ պատրաստել, թոնրում՝ ավանդական լավաշը թխել: Ծրագրի իրագործման դեպքում կկարողանանք մեղմել նաև համայնքի մեկ այլ կարևոր խնդիր՝ գործազրկությունը:

Համայնքն իմ պատկերացմամբ նման է խճանկարի, իսկ նրա անդամները՝ խճանկարի մասնիկներին: Ինչպես անհնար է ստեղծել ամբողջական խճանկար՝ առանց նրա բոլոր մասնիկների, այդպես էլ անհնար է ստեղծել ուժեղ, կատարյալ համայնք առանց նրա բոլոր բնակիչների մասնակցության: Նշանակում է՝ համայնքի խնդիրների լուծման պարտականությունը հավասարապես բոլորիս ուսերին է դրված: Անհրաժեշտ է դրանց վերաբերվել այնպես, ինչպես մեր սեփական խնդիրներին, որովհետև համայնքը մեր տունն է, իսկ նրա կառավարմանը մասնակցելը՝ յուրաքանչյուրիս պարտականությունը:

ԱՆՆԱ ԲԵՇԱՆՅԱՆ

«Համայնքն իմ տունն է, ես մասնակցում եմ համայնքիս կառավարմանը» խորագրով շարադրությունների մրցույթի հաղթող



Աննա Բեչանյան, շարադրությունների մրցույթ, 1-ին տեղ
Լուսինե Աղեկյան, շարադրությունների մրցույթ, 2-րդ տեղ
Արփիկե Ավագյան, շարադրությունների մրցույթ, 3-րդ տեղ

ՆԿԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Սարգիս Հակոբյան, նկարների մրցույթ, 1-ին տեղ




Տիգրան Հարությունյան, նկարների մրցույթ, 2-րդ տեղ



Նելլի Յուզբաշյան, նկարների մրցույթ, 3-րդ տեղ





«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթը
Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Համայնքների
ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրանցման վկայական՝
թիվ 03U063471,
տրված՝ 06. 02. 2004 թ.

Թերթը իրատարակվում է Ամերիկայի
ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
գարգացման գործակալության
օժանդակությամբ իրականացվող «Հանրային
մասնակցություն տեղական
ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի
շրջանակներում: Այստեղ արտահայտված
տեսակետները միմիայն հեղինակներին են և
պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ
կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԽՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՈՒՐ
ՎԱՅՆ ՄՈՎՍԻՅԱՆ
ՎԱՅՐԱՄ ԸՎՅԱՍՅԱՆ
ԱԲՐԱՎԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՐԻՍ ՆԱՎԱՍՏՐՅԱՆ
ՀՈՒՓՈՒՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԸՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՈՎԱՆ
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝
Խմբագիր
ԱՐԵՎԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երևան, Երվանդ Բոջարի 20,
4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ. փոստ՝ info@cfoc.am
Կայք՝ http://cfoc.am/
Տպագրված է «Տիգրան Մեծ»
իրատարակչության տպարանում,
ք. Երևան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: